## ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 2

## 03.02.2023 թվականին կնքված N ԵԱ-ՀՄԱՊՁԲ-22/76-3 գնման պայմանագրի

ք. Երևան «29» 12 2023թ.

«ԵՐԵՎԱՆԻ ԱՎՏՈԲՈՒՍ» ՓԲԸ-ն, ի դեմս տնօրենի ժ/պ Հ. Մանուկյանի, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Գնորդ), մի կողմից, և «ԷԼՍԻՍՏԻԼ» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն՝ Ա. Գասպարյանի, (այսուհետ՝ Վաճառող), մյուս կողմից, ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ, «Գնումների մասին» ՀՀ օրենսդրությամբ, հիմք ընդունելով 03.02.2023թ. կնքված N ԵԱ-ՀՄԱՊՁԲ-22/76-3 ծածկագրով գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 1.1, 8.5 և հաշվի առնելով, որ Գնորդի մոտ առաջացել է գնման առարկա հանդիսացող ապրանքների լրացուցիչ քանակի պահանջ, որի համար նախատեսվել են լրացուցիչ ֆինանսական միջոցներ՝ 7839000 (յոթ միլիոն ութ հարյուր երեսունինը հազար) ՀՀ դրամի չափով, փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

### 1. Համաձայնագրի առարկան

Հետագա համագործակցության նպատակով Կողմերը որոշեցին՝

1.1 Պայմանագրի Հավելված թիվ 2-ով սահմանված մատակարարման ժամանակացույցով նախատեսված ապրանքների ձեռքբերման քանակները ավելացնել 10%-ով՝ համապատասխանաբար պայմանագրի գինը 10%-ով ավելացնելով, որը գումարային արտահայտությամբ կազմում է 7839000 (յոթ միլիոն ութ հարյուր երեսունինը հազար) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:

1.1 Պայմանագրի 3.1 կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝ «Սույն պայմանագրով Վաճառողի կողմից մատակարարված ապրանքի գինը» կազմում է 86229000 (ութսունվեց միլիոն երկու հարյուր քսանինը հազար) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:

1.2 Պայմանագրի Հավելված թիվ 2-ով ներկայացված աղյուսակի 7-րդ չափաբաժնի մասով ներկայացված «Ընդհանուր գումար/ՀՀ դրամ» սյունակի «78390000» ՀՀ դրամ գումարը համապատասխանաբար փոփոխել «86229000» ՀՀ դրամով:

1.3 03.02.2023թ.-ին Կողմերի միջև կնքված Պայմանագրի Հավելված N 3-ով ներկայացված վճարման ժամանակացույցը խմբագրել և հաստատել համաձայն՝ սույն համաձայնագրի Հավելված 1-ի:

### 2. Այլ պայմաններ

2.1. Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2. Սույն Համաձայնագրում չնշված՝ գնման Պայմանագրով նախատեսված դրույթները, պայմանները, Կողմերի իրավունքները և պարտականությունները, Կողմերի պատասխանատվության հետ կապված այլ հարաբերությունները թողնվում են անփոփոխ:

2.3 Սույն համաձայնագիրը կազմված է 1 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն համաձայնագրի թիվ 1 հավելվածը հանդիսանում է սույն համաձայնագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

### 3. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

| ԳՆՈՐԴ | ՎԱՃԱՌՈՂ |
|---|---|
| «ԵՐԵՎԱՆԻ ԱՎՏՈԲՈՒՍ» ՓԲԸ | «ԷԼՍԻՍՏԻԼ» ՍՊԸ |
| ՀՀ, ք. Երևան, Թևոսյան 9 | ՀՀ ք. Երևան, Դավթաշեն 4-րդ թաղ. Միկոյան 103 |
| «Հայէկոնոմբանկ» ՓԲԸ | «Ինեկոբանկ» ՓԲԸ |
| Հ/Հ 163078035496 | Հ/Հ 2050622049901001 |
| ՀՎՀՀ 00875439 | ՀՎՀՀ 00075579 |
| Տնօրենի ժ/պ --------------------Հ. Մանուկյան /ստորագրություն/ Կ.Տ. | Տնօրեն --------------------Ա. Գասպարյան /ստորագրություն/ Կ.Տ. |

Հավելված N 1
«19» դեկտեմբերի 2023թ. կնքված
N ԵԱ-ՀՄԱՊՁԲ-22/76-3 ծածկագրով պայմանագրի
«23» 12 2023թ. կնքված
թիվ 2 համաձայնագրի

## ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| | Ապրանքի | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | Վճարումները նախատեսվում է իրականացնել 2023-2024թթ.՝ ըստ ամիսների, այդ թվում* | | | | | | | | | | | | | |
| | | | հունվար | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | հունվար | Ընդամենը |
| 7 | 09411710/532 | Սեղմված բնական գազ 7 | - | - | - | - | - | - | - | - | - | - | - | 86229000 | 86229000 | 86229000 |

Գնման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցները նախատեսված են «ԵՐԵՎԱՆԻ ԱՎՏՈԲՈՒՍ» ՓԲԸ-ի հրապարակած, փոփոխված և լրացված գնման պլանի համապատասխան անվանատողերով: Վճարումը կիրականացվի ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 օրացուցային օրվա ընթացքում:

**ԳՆՈՐԴ**
«ԵՐԵՎԱՆԻ ԱՎՏՈԲՈՒՍ» ՓԲԸ
ՀՀ, ք. Երևան, Ծմակուտի 9
«Հայէկոնոմբանկ» ՓԲԸ
Հ/Հ 163078035496
ՀՎՀՀ 00875439

Տնօրենի ժ/պ―――――――Հ. Մանուկյան
/ստորագրություն/
Կ.Տ.

**ՎԱՃԱՌՈՂ**
«ԷԼՍԻՍՏԻԼ» ՍՊԸ
ՀՀ ք. Երևան, Դավթաշեն 4-րդ թաղ. Միկոյան 103
«ԻՆԵԿՈԲԱՆԿ» ՓԲԸ
Հ/Հ 2050622049901001
ՀՎՀՀ 00075579

Տնօրեն ―――――――Ա. Գասպարյան
/ստորագրություն/
Կ.Տ